



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ suren.galstyan@justice.am

№ /12.0.02/3380-2021

«15» մարտ 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Զայյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի փետրվարի 10-ին ՀՀ արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 21-04 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 02 խցի վերանորոգման աշխատանքները կներառվեն 2021 թվականին իրականացվելիք վերանորոգման աշխատանքների ցանկում, իսկ կոսմետիկ աշխատանքներ ներկայումս իրականացվում են:

Խնդրում եմ նաև ընդունել ի գիտություն, որ ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին տրվել է համապատասխան հանձնարարական՝ խստագույնս պահպանել ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի N 126-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական

դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգի պահանջները՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով դատապարտյալների լուսանկարահանման կապակցությամբ վերջիններիս համաձայնությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

3/15/2021

X



Sosi Vardanyan

ՍՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատարող՝ Ռուբինա Մխիթարյան
ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության,
քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի
քաղաքականության մշակման վարչություն
Հեռ.՝ (010) 594-081